26.12.2019

ՀՀ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Այն թվականի դեկտեմբերի 2-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am-ում, տեղադրվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ՝ մշակված Շրջակա միջավայրի նախարարության կողմից: Այս կապակցությամբ նույն օրը շուրջ երկու տասնյակ լրագրողական և այլ հասարակական կազմակերպություններ տարածեցին հայտարարություն՝ կոչ անելով անհապաղ հրաժարվել այդ նախաձեռնությունից, քանի որ ՏԱ օրենքը փոփոխելու գործընթացին անհրաժեշտ է ցուցաբերել պատասխանատու և համակարգային մոտեցում, իսկ առանց բաց և թափանցիկ բնապահպանության օրենքի նախագծեր ստեղծելը, առանձին կողմերի պատեհապաշտությամբ առաջնորդվելը, խաթարում է ՀՀԿ-պետություն համագործակցության մեխանիզմներն ու թուլացնում պետության նպատակամբ հանրության վստահությունը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Նախատեսո՞ւմ է արդյոք Նախարարությունը շրջանառությունից հանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի վերոհիշյալ նախագիծը:
2. Հաշվի առնո՞ւմ եք ոլորտի մասնագիտացված կառույցների՝ Ձեր այս նախաձեռնության վերաբերյալ բացասական դիրքորոշումը և ի՞նչպես:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված 5-օրյա ժամկետում:

Շուշան Դոյդոյան
Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Աշոտ Մելիքյան
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ